ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

15.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

ԹԻՎ ՍՑ-ԷՍ-2019/49

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 22.02.2018թ. թիվ 26/26/3044-19 գրությամբ «ՍՄՕԳՍՈՅՈՒՋ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02668124/ և «ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 90034632/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 19.02.2019թ. թիվ ՊՆ/02/13-2019 գրության հիման վրա, 22.02.2018թ. նախաձեռնել է «ՍՄՕԳՍՈՅՈՒՋ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02668124/ և «ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 90034632/ (այսուհետ՝ նաև Ընկերություններ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 19.02.2019թ. թիվ ՊՆ/02/13-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգում «ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության՝ կոնսորցիումի պայմանագիր «Թրեյդ» ՍՊԸ հետ/ գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին համակարգի (eauction.armeps.am) միջոցով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փատաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Սահմանված ժամկետում «ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ-ն փատաթղթեր ընդհանրապես չի ներկայացրել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ -ի գնման հայտը:

Կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն՝ պատշաճ ծանուցված լինելով Բողոքներ քննող անձի մոտ կայանալիք նիստերի ժամանակացույցի վերաբերյալ՝ չէր ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

3. <u>«ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ-ն 14.03.2019թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Հայտնում ենք, որ անհասկանալի պատճառներով չենք ստացել աճուրդի ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/2» որակավորման փաստաթղթերը ներկայացնելու պատվիրատուի ծանուցումը, որի արդյունքում այս պահի դրությամբ հայտնվել ենք սև ցուցակում ներառվելու վտանգի տակ: Հայտնում ենք, որ հնարավորության դեպքում, անգամ հիմա, պատրաստ ենք մեր ուղարկած գնային առաջարկով կնքել պայմանագիր և կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները, սակայն, գիտակցելով ներկայիս իրավիճակը, հարկ ենք համարում նշել, որ աճուրդի ներկայացված փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվել են հաշվապահ Տիգրան Գրիգորյանի կողմից, ով նշված ստորագրությունը դնելու լիազորություն չի ունեցել, այլ ունեցել է միայն որակավորման փաստաթղթերը կնքելու և ստորագրելու լիազորություն: Հաշվի առնելով վերագրյալը՝ կարծում ենք, որ պատշաճ լիազորություն չլինելու հանգամանքներում կոնսորցիումի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից ենթակա էր մերժման, որի արդյունքում չէր առաջանա ընկերությանը սև ցուցակում ներառելու ընթացակարգի հարուցումը: Ամփոփելով նշվածը՝ խնդրում ենք կոնսորցիումին չներառել սև ցուցակում:

Միաժամանակ հայտնում ենք, որ ընկերությունը հանդիսանում է պարտաճանաչ հարկ վճարող և իր ծավալած գործունեության ընթացքում երբևէ անբարեխիղճ վարքագիծ չի դրսևորել»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «ՍՄՕԳՍՈՅՈՒՋ» ՍՊԸ-ի տնօրեն Արսեն Մկրտչյանը և ներկայացուցիչ Տիգրան Գրիգորյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2019/49 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.02.2018թ. թիվ 26/26/3044-19 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 19.02.2019թ. թիվ ՊՆ/02/13-2019 գրությունը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող

հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 16.01.2019թ. նիստի թիվ 4 և 07.02.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությունները, «ՍՄՕԳՍՕՅՈՒԶ» ՍՊԸ-ի /կոնսորցիումի պայմանագիր «Թրեյդ» ՍՊԸ-ի հետ/ /այսուհետ՝ Կոնսորցիում/ կողմից ներկայացված մրցութային հայտը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շաքարավազի անհատական փաթեթավորման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ՝ նաև Աճուրդ) հայտ է ներկայացրել «ՍՄՕԳՍՕՅՈՒԶ» ՍՊԸ-ն /կոնսորցիումի պայմանագիր «Թրեյդ» ՍՊԸ-ի հետ/՝ Աճուրդի 1-ին չափաբաժնի համար:

«ՍՄՕԳՍՕՅՈՒԶ» ՍՊԸ-ն և «Թրեյդ» ՍՊԸ-ն Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N1 հավելվածի՝ դիմում-հայտարարության 2-րդ կետով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովի 16.01.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության՝

- 4.1 կետի համաձայն՝ «ԷՆՋԼ ՍՈՒՐ» ՍՊԸ-ի հայտը մերժելու արդյունքում «ՍՄՕԳՍՕՅՈՒԶ» ՍՊԸ-ն ճանաչվել է աճուրդի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

- 4.2 կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակցի առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «ՍՄՕԳՍՕՅՈՒԶ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից նույն ընկերության գլխավոր հաշվապահ Տիգրան Գրիգորյանին /Ն.Ք. 009441346/ տրվել է 14.12.2019թ. թվագրված լիազորագիր, որով վերջինս լիազորվել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով

որակավորման փաստաթղթերը պատրաստելու, էլեկտրոնային ստորագրությամբ կնքելու, և համակարգի միջոցով հանձնաժողովին ներկայացնելու նպատակով:

Հանձնաժողովի 07.02.2018թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ-ն /կոնսորցիումի պայմանագիր «Թրեյդ» ՍՊԸ-ի հետ/ կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի շրջանակներում որակավորումը հիմնավորող փաստաթղթերն ընդհանրապես չի ներկայացրել, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները՝ «ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է:

Նույն կետի համաձայն՝ «ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ-ի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունը նույնպես գնահատվել է անբավարար, քանի որ մասնակիցը չի ներկայացրել կոնսորցիումի պայմանագիրը և գնահատող հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել ճշտելու, թե կոնսորցիումի որ անդամն է ապահովելու «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը:

Քանի որ eauction.am համակարգը թույլ չէր տալիս մասնակցի հայտը մերժել որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ընդհանրապես չներկայացնելու հիմանովորմամբ, ուստի լիազոր մարմնին խնդրի լուծման վերաբերյալ խնդրանք է ներկայացվել: Լիազոր մարմնի առաջարկի հիման վրա, որպես խնդրի միակ լուծում, գնահատող հանձնաժողովը www.eauction.am կայքում մերժման ենթակա մասնակիցների ներկայացրած որակավորման փաստաթղթերը գնահատել է անբավարար, որից հետո վերջիններիս համակարգի միջոցով ծանուցում է ուղարկել՝ անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Օրենքով նախատեսված մեկ աշխատանքային օրվանից հետո Հանձնաժողովը կրկին անգամ մերժման ենթակա մասնակիցների ներկայացրած որակավորման փաստաթղթերը գնահատել է անբավարար:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք

ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի՝

- 3-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով նույն կարգով սահմանված առանձնահատկությունները:

- 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ առաջին տեղն զբաղեցրած ճանաչված մասնակիցը հրավերով սահմանված՝ որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է նաև իր կողմից հաստատված ապրանքների գնման դեպքում՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

- 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև նույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

- 21-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին: Նույն կարգի 20-րդ կետով սահմանված հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին:

- 23-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- 24-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի՝

• 3.3 կետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե նույն հրավերով պահանջվող փաստաթղթերը ներկայացնում է գործակալը, ապա ներկայացվում է նաև վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

• 7.10 կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը.

• 7.12 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ

աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

• 7.16 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

• 7.17 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.9-ից 7.16-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

- 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ-ի և «Թրեյդ» ՍՊԸ-ի Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N1 հավելվածը՝ դիմում-հայտարարությունը հաստատվել է «ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ-ի հաշվապահ Տիգրան Գրիգորյանի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

- «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից նույն ընկերության գլխավոր հաշվապահ Տիգրան Գրիգորյանին /Ն.Ք. 009441346/ 14.12.2019թ. տրված լիազորագրով վերջինս լիազորվել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով որակավորման փաստաթղթերը պատրաստելու, էլեկտրոնային ստորագրությամբ կնքելու, և համակարգի միջոցով հանձնաժողովին ներկայացնելու նպատակով:

- «ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից «ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ-ի գլխավոր հաշվապահ Տիգրան Գրիգորյանին «ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ-ի և «Թրեյդ» ՍՊԸ-ի Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N1 հավելվածը՝ դիմում-հայտարարությունը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու լիազորություն չի տրվել:

- «ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ-ն /կոնսորցիումի պայմանագիր «Թրեյդ» ՍՊԸ-ի հետ/՝ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից՝ Աճուրդի 1-ին չափաբաժնի մասով:

- Հանձնաժողովը առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել է ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

- «ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ-ն /կոնսորցիումի պայմանագիր «Թրեյդ» ՍՊԸ-ի հետ/ կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի շրջանակներում որակավորումը հիմնավորող փաստաթղթերն ընդհանրապես չի ներկայացրել, ինչի հետևանքով «ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ-ի հայտը Հանձնաժողովի կողմից մերժվել է:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Կոնսորցիումի կողմից Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N1 հավելվածը՝ դիմում-հայտարարությունը հաստատված է նման լիազորություն չունեցող անձի կողմից, հետևաբար, այն պետք է մերժվեր Հանձնաժողովի կողմից, ինչի արդյունքում ի հայտ չէին գա այն հանգամանքները, որպիսիք հիմք են ծառայել Կոմնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի համար:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը՝ բավարար գնահատելով «ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ-ի և «Թրեյդ» ՍՊԸ-ի Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N1 հավելվածը՝ գործել է ոչ իրավաչափ, և խախտել է Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև Հրավերի 3.3 կետով նախատեսված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ-ին և «Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.02.2018թ. թիվ 26/26/3044-19 գրությամբ «ՍՄՕԳՍՈՅՈՒՋ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02668124/ և «ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 90034632/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ